ՍԵՐՄԵՐ ԵՎ ՏՆԿԱՆՅՈՒԹԵՐ
ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐԻ
ԱՍՈՑԻԱՑԻԱ

ՀՀ էկոնոմիկայի նախարար՝
Գեվորգ Պապոյանին
«Սերմեր և տնկանյութեր արտադրողների ասոցացիա»
հասարակական կազմակերպության
Նախագահ՝ Իշխան Հովսեփյանից
+37443720127
info.seeds.planting@gmail.com

ԴԻՄՈՒՄ ՀԱՅՏ

Հարգելի՛ պ-ն Նախարար
Սերմեր և Տնկանյութեր Արտադրողների Ասոցիացիան սույնով հայտնում է իր պատրաստակամությունը՝ մասնակցելու ՀՀ էկոնոմիկայի նախարարին կից հասարակական խորհրդի աշխատանքներին և ներկայացնում է մասնակցության հայտ:Ասոցիացիայի գործունեությունը միտված է սերմարտադրության, տնկանյութերի արտադրության և բույսերի բազմացման նյութերի շուկայի զարգացմանը, ոլորտի կարգավորման կատարելագործմանը, ինչպես նաև արտադրողների և պետական մարմինների համագործակցության խորացմանը: Հաշվի առնելով մեր փորձառությունը և ոլորտային մասնակցությունը՝ Ասոցիացիան շահագրգռված է մասնակցելու նախարարության խորհրդատվական գործընթացներին, մասնագիտական աշխատանքային խմբերին և ոլորտային քաղաքականությունների մշակմանն ուղղված քննարկումներին:

- **Կազմակերպություն.** Սերմեր և Տնկանյութեր Արտադրողների Ասոցիացիա
- **Ներկայացուցիչ.** Իշխան Հովսեփյան
- **Պաշտոն.** Նախագահ
- **Կոնտակտային տվյալներ.** հեռ. +37443720127, էլ. փոստ info.seeds.planting@gmail.com

Հուսով ենք, որ Ասոցիացիայի ներգրավումը կնպաստի ոլորտի զարգացմանն ու պետական-մասնավոր համագործակցության արդյունավետությանը:

Հարգանքով,
**Սերմերի և Տնկանյութերի Արտադրողների Ասոցիացիա**

ՀԿ նախագահ՝ ---------- Ի. Հովսեփյան

25/11/2025թ

Scanned with CamScanner

Կազմված է 09.Դեկտեմբեր. 2024թ.

ՏՊԱԳՐՎԱԾ Է ԸՆԴԱՄԵՆԸ 2 ՕՐԻՆԱԿԻՑ
ՕՐԻՆԱԿ 1

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

**« ՍԵՐՄԵՐ ԵՎ ՏՆԿԱՆՅՈՒԹԵՐ ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ»**
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

«09» Դեկտեմբեր 2024Թ.

ՀԻՄՆԱԴԻՐ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ՝

_____ Իշխան Հովսեփյան Յուրիի
(ստորագրություն) (անուն, ազգանուն)

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ 211.171.1428262

ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ

09432167

«19» 12 2024Թ.

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

_____

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

**« ՍԵՐՄԵՐ ԵՎ ՏՆԿԱՆՅՈՒԹԵՐ ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ »**

## ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. **«ՍԵՐՄԵՐ ԵՎ ՏՆԿԱՆՅՈՒԹԵՐ ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ»** հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ կրճատ «ՍՏԱԱ») Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, օտարերկրյա պետությունների քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց (այսուհետ՝ ֆիզիկական անձ) և (կամ) իրավաբանական անձանց հասարակական միավորում է, որն ունի ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակ:

1.2. Կազմակերպության գործունեության սկզբունքներն են օրինականությունը, խտրականության բացառումը, բարեխղճությունը, անդամության կամավորությունը, անդամների շահերի ընդհանրությունը, ինքնակառավարումը և հաշվետվողականությունը:

1.3. Կազմակերպությունը գործում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում և օտարերկրյա պետություններում՝ այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

1.4. Կազմակերպության անվանումն է՝

Հայերեն՝ **«ՍԵՐՄԵՐ ԵՎ ՏՆԿԱՆՅՈՒԹԵՐ ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ»** հասարակական կազմակերպություն, հապավումը՝ «ՍՏԱԱ»

Ռուսերեն՝ общественная организация, **«АССОЦИАЦИЯ ПРОИЗВОДИТЕЛЕЙ СЕМЯН И ПОСАДОЧНЫХ МАТЕРИАЛОВ»** հապավումը՝ «СТАА»

Անգլերեն՝ **"ASSOCIATION OF PRODUCERS OF SEEDS AND PLANTING MATERIALS" non-governmental organization**

հապավումը՝ «STAA»

1.5. Կազմակերպության գտնվելու վայրն է՝ ՀՀ, Մարզ Սյունիք համայնք Կապան բնակավայր Արծվանիկ 4-րդ փողոց 9/3 շենքում:

1.6.Կազմակերպությունը իրավաբանական անձի կարգավիճակ է ձեռք բերում իր պետական գրանցման պահից, ունի հայերեն, անգլերեն, ռուսերեն լեզուներով կլոր կնիք, պաշտոնաթղթեր, հաշվարկային, ընթացիկ և այլ հաշիվներ բանկերում՝ ինչպես ՀՀ դրամով, այնպես էլ արտարժույթով

1.7.Կազմակերպությունն կարող է ունենալ խորհրդանիշ

1.8.Կազմակերպությունն օգտվում է իրավաբանական անձի, այդ թվում հասարակական կազմակերպության համար օրենքով սահմանված բոլոր իրավունքներից և կրում է համապատասխան պարտականություններ:

## 2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

2.1. Կազմակերպության գործունեության առարկան և նպատակներն են՝

2.1.1 Աջակցել Հայաստանի Հանրապետության սերմնաբուծությամբ և սերմարտադրությամբ, տնկանյութերի բուծմամբ և արտադրությամբ, գործունեություն ծավալող ֆիզիկական և իրավաբանական անձանց, գյուղացիական (ֆերմերային) տնտեսություններին, գյուղատնտեսական կոոպերատիվներին, գործունեության համակարգման և իրավունքների շահերի պաշտպանության շրջանակներում: Ապահովել կայուն լուծումներ բոլոր ֆերմերների համար: Համագործակցությունը դարձնել մշակույթի մի մաս և համախմբել բոլոր ռեսուրսներն ի շահ ոլորտի կայացմանն և զարգացմանն: Միավորել բուծողներին, ֆերմերներին, արտադրողներին, դիստրիբյուտորներին և սպառողներին: Օգնել արտադրողներին արտադրել շատ և որակյալ արտադրանք:

2.1.2 Նպաստել Հայաստանի Հանրապետության բուսաբույծներին, տարբեր բնակլիմայական պայմաններին դիմացկուն բարձր արտադրողական բույսերի սորտերի ստեղծման և արտադրության գործում:

2.1.3 Նպաստել ՀՀ-ում սերմարտադրության եվ տնկարանային տնտեսությունների կայացմանը և զարգացմանը,ստեղծել սերմնակայաններ, տնկարանային տնտեսություններ, ներդնել նոր շուկայավարման համակարգ միջազգային լավագույն փորձի ներդրմամբ: Ստեղծել ենթակառուցվածքներ լաբորատորիաներ: Համագործակցել միջազգային ընկերությունների հետ, համատեղ ստեղծել ստորաբաժանումներ, ենթակառուցվածքներ, ներկայացնել իրենց արտադրանքն, կազմակերպել գիտաժողովներ,վերապատրաստման դասընթացներ, սեմինարներ, փորձի փոխանակում, կադրերի վերապատրաստում, ցուցահանդեսների կազմակերպում և այլ միջոցառումներ:

2.1.4 Աջակցել ՀՀ-ում գյուղատնտեսության զարգացմանն, գյուղական տարածքների և գյուղատնտեսական արտադրության զարգացմանն ուղղված, վարչական խոչընդոտների թուլացում, գյուղատնտեսական սպառողական կոոպերացիայի զարգացում, գիտական և տեղեկատվական-խորհրդատվական աջակցություն, միջազգային համագործակցության

զարգացմանն; նորմատիվ, իրավական ակտերի և փաստաթղթերի կատարելագործմանն ուղղված, առաջարկությունների մշակմանը: Ասոցիացիան ակտիվորեն մասնակցություն պետք է ունենա օրինագծերի և ենթաօրենսդրական ակտերի նախապատրաստմանը, որոնք ուղղված են Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսության զարգացմանն, բույսերի բուծման և սերմնաբուծության զարգացմանը և բարելավմանը: Նպաստել ՀՀ-ում բարեփոխումների իրականացմանը, այդ բարեփոխումների վերաբերյալ մշակել և ներկայացնել առաջարկներ, իրականացնել դրանց քարոզչությունն ու լոբբինգը հանրության մոբիլիզացիայի միջոցով, վերը նշված ոլորտներում իրականացնել ուսումնասիրություններ:
2.1.5. Սելեկցիոներների, սերմարտադրողների և բուսաբույծների հետ ստեղծել մեկ ապրանքային նշան, և այդ ապրանքանիշի ներքո ներկայանալի լինել ինչպես տեղական շուկայում այնպես էլ միջազգային շուկաներում:
2.1.6 Իրականացնել Կազմակերպության անդամների կողմից արտադրվող սերմերի և տնկանյութերի որակի խթանումը՝ տեղական և արտահանման շուկաներում արժանի ներկայանալու նպատակով, որակի ապահովման նպատակով դրանց որակի ստուգման մեխանիզմների, որակի գնահատման միասնական համակարգի մշակումն ու գործարկումը, որակը հավաստող միասնական ապրանքային նշանի (պիտակի) ձևավորումը, տրամադրումը ու առաջմղումը, արտադրվող սերմերի և տնկիների արտահանման խթանումը, այդ թվում՝ համատեղ միջոցառումների, արտահանման շուկաներում միասնական ապրանքային նշանի ներքո հանդես գալու, ինչպես նաև արտահանման միասնական հարթակի միջոցով:

2.2.1 Կազմակերպությունը կարող է իր կանոնադրական նպատակներից և խնդիրներից բխող առաջարկություններ ներկայացնել ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին:
2.2.2 Կազմակերպությունը կարող է համագործակցել ինչպես ՀՀ պետական և ոչ պետական մարմինների, առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների, ասոցիացիաների, այնպես էլ արտասահմանյան և միջազգային կազմակերպությունների հետ:
2.2.1 Կազմակերպությունը իր կանոնադրությանը համապատասխան, կարող է անդամակցել միջազգային և օտարերկրյա ոչ առևտրային կազմակերպություններին, կնքել համաձայնագրեր և պայմանագրեր օտարերկրյա ու միջազգային կազմակերպությունների հետ և ունենալ միջազգային այլ կապեր: Ինչպես նաև համակարգված գործունեություն ծավալելու, ընդհանուր շահեր ներկայացնելու և պաշտպանելու նպատակով այդ կազմակերպությունների հետ ստեղծել համատեղ միություններ կամ անդամակցել նրանց ստեղծած միություններին՝ պահպանելով իր ինքնուրույնությունը և իրավաբանական անձի կարգավիճակը:
2.2.3 Կազմակերպությունը, իր կանոնադրությանը համապատասխան, կարող է այլ պետություններում ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ՝ այդ պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ:
2.2.4 Կազմակերպությունը օրենքով սահմանված կարգով կարող է հիմնել լրատվության միջոցներ, պատրաստել և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հրատարակել մասնագիտական գրականություն կամ այլ նյութեր, ներկայացնել լրատվական և գովազդային նյութեր: Օժանդակել նորմատիվային փաստաթղթերի, գիտական կամ գիտամեթոդական աշխատանքների մշակմանը: Տեղեկատվություն տարածել իր գործունեության վերաբերյալ՝ զանգվածային լրատվության միջոցներով:
2.2.5 Կազմակերպությունն իրավունք ունի իր կանոնադրությամբ սահմանված նպատակներին համապատասխան ստեղծելու առանձնացված ստորաբաժանումներ, մասնաճյուղեր, ներկայացչություններ, առևտրային կազմակերպություններ կամ մասնակից դառնալ այդ կազմակերպություններին, իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն, այդ նպատակով տնօրինելու իր գույքը և գործունեության արդյունքները, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ստեղծելու առևտրային կազմակերպություն կամ դառնալ նրա մասնակից:
2.2.6 Կազմակերպությունը օրենսդրության սահմանված կարգով կարող է ձեռք բերել, ստանալ այդ թվում նաև անվճար, օգտագործել անշարժ և շարժական գույք, տրանսպորտային միջոցներ, հիմնական միջոցներ, օրենքով չարգելված այլ գույք: Օտարել կամ վարձակալության հանձնել կազմակերպությանն պատկանող անշարժ և շարժական գույքն, տրանսպորտային միջոցներն, հիմնական միջոցներն: Ինքնուրույն կազմավորել իր ֆինանսական ռեսուրսներն, այդ թվում փոխառու միջոցների ներգրավմամբ, Հայաստանի Հանրապետությունում և այլ պետություններում ստանալ վարկեր, դրամաշնորհներ այդ թվում արտարժույթով: Իրականացնել ինքնուրույն արտաքին գործունեություն, անդամներին գործուղել արտասահմանյան երկրներ և հրավիրել այլ քաղաքացիների, պատվիրակների:

2.2.7 Կազմակերպությունը կարող է իր նպատակներին համապատասխան՝ ունենալ շահառուներ, ինչպես նաև իր աշխատանքներում օրենքով սահմանված կարգով ներգրավել կամավորների: Ուղղակի շահառուներն են՝ սերմերի և տնկանյութերի բուծմամբ զբաղվող ֆիզիկական և իրավաբանական անձինք, գյուղատնտեսությամբ զբաղվող ֆիզիկական և իրավաբանական անձինք, իսկ անուղղակի շահառուներն են՝ ՀՀ քաղաքացիները, քաղաքացիական հասարակության կազմակերպությունները, ինչպես նաև անձինք կամ անձանց խմբերը, ի շահ որոնց ուղղված և իրականացվում է Կազմակերպության կանոնադրության 2. կետով նախատեսված գործունեության առարկան և նպատակները:
2.2.8 Կազմակերպությունը օրենքով սահմանված կարգով ներկայացնում ու պաշտպանում է իր և իր անդամների, շահառուների և կամավորների իրավունքներն ու օրինական շահերն այլ կազմակերպություններում, դատարանում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում:
2.2.9 Ծավալել բարեգործական գործունեություն:

## 3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԴԱՌՆԱԼՈՒ ԵՎ ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1. Կազմակերպության անդամ կարող է դառնալ
3.1.1 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության, ինչպես նաև օտարերկրյա ցանկացած ֆիզիկական անձ, ցանկացած իրավաբանական անձ ով ընդունում է սույն կանոնադրությունը, կանոնադրությամբ սահմանված նպատակները և ցանկանում է իր գործունեությամբ նպաստել կազմակերպության կանոնադրական նպատակների իրագործմանը:
3.1.2 Ով ծավալում է գյուղատնտեսական գործունեություն,զբաղվում է բուսաբուծությամբ,տնկարտադրությամբ ,սերմնաբուծությամբ:
3.1.3 Ով պարտավորվում է համապատասխանեցնի իր տնտեսությունն կազմակերպության Խորհրդի կողմից հաստատված չափորոշիչներին, տնտեսության արտադրական պայմանների պահանջներին համապատասխան նվազագույն նորմերին:
3.2. Կազմակերպության անդամ դառնալու ցանկություն ունեցող անձը գրավոր դիմում է Կազմակերպության գործադիր մարմնին՝ Նախագահին: Իրավաբանական անձը իր իրավասու մարմնի որոշումն է ներկայացնում կազմակերպության նախագահին:
3.3 Կազմակերպության անդամության մեջ ընդունելու հարցը լուծում է Նախագահը՝ սույն Կանոնադրության հիման վրա:
3.4 Կազմակերպության անդամը ցանկացած ժամանակ ազատ է դուրս գալու Կազմակերպությունից:
3.5 Կազմակերպության անդամությունից դուրս գալը կատարվում է տվյալ անդամի գրավոր դիմումի հիման վրա:
3.6 Կազմակերպության անդամի հեռացումը կատարվում է Կազմակերպության նախագահի՝ տվյալ անդամին Կազմակերպության անդամությունից հեռացնելու մասին որոշման հիման վրա՝ սույն կանոնադրությամբ սահմանված պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքերում: Կազմակերպության այն անդամը, որը Նախագահի կողմից սահմանված լինելու դեպքում վեց ամիս անընդմեջ չի վճարում անդամավճար, Նախագահության որոշմամբ զրկվում է անդամությունից: Վերստին նրա անդամագրումը կատարվում է ընդհանուր հիմունքներով Կազմակերպության անդամությունից հեռացումը կատարվում է Նախագահի որոշմամբ:
3.7 Կազմակերպությունը վարում է իր անդամների հաշվառումը և պարբերաբար թարմացնում նրանց վերաբերյալ տվյալները: Կազմակերպության անդամների հաշվառում վարելու կարգը և պայմանները սահմանվում է Կազմակերպության նախագահի կողմից:
3.8 Կազմակերպության անդամը մուծում է մուտքավճար և անդամավճար, որի չափը և գանձման կարգը սահմանվում են Կազմակերպության խորհրդի կողմից: Տարեկան անդամավճարը վճարվում է ոչ ուշ, քան մինչև համապատասխան տարվա առաջին եռամսյակի ավարտը: Նոր Անդամի անդամավճարը վճարվում է անդամ դառնալու օրվան հաջորդող մեկ ամսվա ընթացքում՝ ամբողջ տարվա համար նախատեսված չափով՝ անկախ անդամության պահից:

## 4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1 Կազմակերպության անդամն իրավունք ունի՝

4.1.1 Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված դեպքերում և կարգով ընտրելու և ընտրվելու Կազմակերպության կառավարման մարմիններում,
4.1.2 Ներկա լինելու ժողովին անձամբ (իրավաբանական անձի դեպքում՝ լիազոր ներկայացուցչի միջոցով) կամ Կազմակերպության կոլեգիալ կառավարման այլ մարմինների նիստերին,
4.1.3 Կազմակերպության խորհրդի կողմից ընդունված դեպքերում և կարգով անվճար օգտվել կազմակերպության ծառայություններից:
4.1.4 Ծանոթանալու Կազմակերպության մարմինների արձանագրություններին, ստանալ նրանց ընդունած որոշումների պատճենները,
4.1.5 Վերադասության կամ դատական կարգով բողոքարկել կազմակերպության մարմինների որոշումները:Կազմակերպության անդամի կողմից գործադիր մարմնի որոշումների բողոքարկումը իրականացվում է ժողովին համապատասխան դիմում ներկայացնելու եղանակով:
4.1.6 Կազմակերպությունից պահանջելու տեղեկություններ, ստանալու փաստաթղթերի պատճեններ՝ Կազմակերպության կանոնադրության փոփոխությունների, մարմինների արձանագրությունների, որոշումների, գույքի կառավարումից ստացված դրամական միջոցների վերաբերյալ, ինչպես նաև ստանալու նրա ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրած անկախ աուդիտորի եզրակացության պատճենը, որոնք վերաբերում են վերջին երեք տարիներին,
4.1.7 Կազմակերպության կառավարման մարմինների քննարկմանը ներկայացնել Կազմակերպության գործունեության և ծրագրերի վերաբերյալ առաջարկություններ, դիտողություններ, գործնական ծրագրեր,
4.1.8 Անարգել դուրս գալ Կազմակերպության շարքերից,
4.1.9 Իրականացնելու օրենքով կամ Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներ:

4.2. Կազմակերպության անդամը պարտավոր է՝
4.2.1 Կատարել Կազմակերպության կանոնադրական պահանջները և կառավարման մարմինների որոշումները,
4.2.2 Բարեխղճորեն կատարել կառավարման մարմինների որոշմամբ իր վրա դրված պարտականությունները,
4.2.3 Վճարել մուտքավճար և անդամավճար,
4.2.4 Իր տնտեսությունում օգտագործել միմիայն հավաստագրված սերմեր և տնկանյութեր,
4.2.5 Կազմակերպությունը կարող է շնորհել պատվավոր անդամի կոչումներ: Պատվավոր անդամի կոչումը շնորհվում է Կազմակերպության Խորհրդի որոշմամբ: Կազմակերպության պատվավոր անդամները որևէ այլ իրավունքներ և պարտականություններ չունեն:

## 5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1 Կազմակերպության կառավարման կառուցվածքն է՝ Ժողովը, Խորհուրդը և Նախագահը:
5.2 Հաշվի առնելով, որ Կազմակերպության գործունեությունը վերահսկելու համար սույն կանոնադրությամբ առանձին մարմին չի նախատեսվում ստեղծել, ուստի Կազմակերպության գործունեության վերահսկողությունը իրականացնելու է Ժողովը:
5.3 Կազմակերպության կառավարման մարմիններն ընտրովի են:
5.4 Կազմակերպության կառավարման մարմինների անդամ կարող են դառնալ 18 տարին լրացած անձինք:
5.5 Կազմակերպության բարձրագույն մարմինը նրա անդամների ժողովն է, որին պատկանում է Կազմակերպության կառավարման և գործունեության ցանկացած հարցի վերաբերյալ վերջնական որոշում կայացնելու իրավունքը:
5.6 Կազմակերպության ժողովը գումարվում է հինգ տարին մեկ անգամ՝ Կազմակերպության նախագահի կողմից, անդամների համատեղ հավաքի ձևով կամ հեռակա կարգով՝ հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ՝ կազմելով համապատասխան արձանագրություն: Նախագահը որոշում է ժողովի անցկացման օրը, ժամը և տեղը, ինչպես նաև ժողովի օրակարգի նախնական տարբերակը և այդ մասին ոչ ուշ, քան քսան օր առաջ պատվիրված նամակով կամ էլեկտրոնային եղանակով կամ զանգվածային լրատվության միջոցներով կամ օրենքով սահմանված այլ եղանակներով ծանուցում է կազմակերպության անդամներին և կառույցներին:
5.7 Եթե Կազմակերպության անդամների թվաքանակը անցնում է հարյուրի սահմանը, ապա ժողովին կարող են մասնակցել անդամների կողմից ընտրված ներկայացուցչական պատվիրակները՝ խորհրդի կողմից սահմանված քվոտայով: Խորհուրդը որոշում է ժողովի

անցկացման օրը, ժամը և տեղը, ինչպես նաև ժողովի օրակարգի նախնական տարբերակը և այդ մասին ոչ ուշ, քան հինգ օր առաջ էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է Կազմակերպության անդամներին՝ հավատավերով հասցեատիրոջ կողմից ծանուցումը ստանալու փաստը:
5.8 Կազմակերպության արտահերթ ժողով գումարվում է Կազմակերպության նախագահի, խորհրդի կամ անդամների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի պատճառաբանված որոշման դեպքում, ոչ ուշ, քան տասն աշխատանքային օրվա ընթացքում՝ Կազմակերպության նախագահի կողմից: Արտահերթ ժողովները հրավիրվում են հրավիրողի օրակարգով:
5.9 Հերթական կամ արտահերթ ժողով գումարվում է դրա մասնակիցների համատեղ հավաքի ձևով կամ հեռակա կարգով՝ հեռահաղորդակցության միջոցների օգտագործմամբ:

5.10. Ժողովի բացառիկ իրավասության հարցերն են՝
5.10.1 հաստատում է Կազմակերպության նոր խմբագրությամբ կանոնադրությունը, կատարում է Կազմակերպության կանոնադրությունում փոփոխություններ կամ լրացումներ,
5.10.2 հաստատում է Կազմակերպության կառուցվածքը,
5.10.3 որոշում է Կազմակերպության խորհրդի թվաքանակը, հինգ տարի ժամկետով ընտրում է Կազմակերպության Խորհրդի անդամներին, փոփոխում է խորհրդի կազմը, վաղաժամկետ դադարեցնում է խորհրդի անդամների լիազորությունները,
5.10.4 հինգ տարի ժամկետով ընտրում է Կազմակերպության գործադիր մարմին՝ նախագահ, որը ի պաշտոնե մտնում է Կազմակերպության Խորհրդի կազմի մեջ և հանդիսանում է Կազմակերպության խորհրդի նախագահը, վաղաժամկետ դադարեցնում է նրա լիազորությունները,
5.10.5 դադարեցնում է Կազմակերպության մարմինների իրավական ակտերի պահանջներին և կանոնադրությանը հակասող որոշումների գործողությունը,
5.10.6 ընդունում է որոշում Կազմակերպության վերակազմակերպման մասին,
5.10.7 ընդունում է որոշում Կազմակերպությունը լուծարելու մասին, բացառությամբ դատարանի վճռով լուծարվելու դեպքերի,
5.10.8 իրականացնում է օրենքով կամ Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ,
5.10.9 Կազմակերպության աուդիտն իրականացնող անձի ընտրությունը, եթե օրենքի համաձայն կազմակերպությունը ենթակա է պարտադիր աուդիտի,
5.10.10 Կազմակերպության ռազմավարության հաստատումը, եթե Կազմակերպությունը նախատեսում է ունենալ ռազմավարություն,
5.10.11 հինգ տարին մեկ անգամ գործադիր մարմնի կողմից Ժողովի գումարմանը նախորդող տարիների ընթացքում հաստատված Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունների հաստատումը:

5.11. Ժողովն իրավազոր է, եթե գումարվել է օրենքին և Կազմակերպության կանոնադրությանը համապատասխան, և Ժողովին մասնակցում է Կազմակերպության բոլոր անդամների ընդհանուր թվի կեսից ավելին: Ժողովի որոշումներն ընդունվում են կազմակերպության Ժողովին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ: Ժողովի արձանագրությունը ստորագրում են ժողովի նախագահողը և քարտուղարը: Ժողովի արձանագրությունները և հաշվետվությունները պահպանվում են 5 տարի:

5.12 Կազմակերպության Խորհուրդը.
5.12.1 Կազմակերպության Խորհուրդն համարվում է Կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմինը Կազմակերպության ժողովների միջև ընկած ժամանակահատվածում, ընտրվում կամ նշանակվում է հինգ տարի ժամկետով: Կազմակերպության Խորհրդի նիստերն հրավիրվում են առնվազն տարին մեկ անգամ:
5.12.2 Խորհրդի անդամներ կարող են լինել ինչպես կազմակերպության անդամներն այնպես էլ այլ ֆիզիկական անձինք: Խորհրդի անդամներն ընտրվում են Ժողովի կողմից՝ 5 տարի ժամկետով՝ վերընտրման իրավունքով: Խորհրդի անդամը շարունակում է պաշտոնավարել մինչև նոր անդամի ընտրությունը կամ վերընտրությունը:
5.12.3 Կազմակերպության Խորհուրդի արտահերթ նիստ կարող է հրավիրվել նախագահի կամ կազմակերպության խորհրդի անդամների երկու երրորդի պահանջով: Անցկացնում է նիստեր, քննարկում և որոշումներ է կայացնում Կազմակերպության գործունեությանն առնչվող բոլոր հարցերի վերաբերյալ, բացառությամբ այն հարցերի, որոնք մտնում են Կազմակերպության ժողովի և նախագահի իրավասությունների մեջ,

5.12.4 նախապատրաստում է Կազմակերպության ժողովները, սահմանում է Կազմակերպության ժողովի պատվիրակների քվոտան ըստ Կազմակերպության անդամների թվի, Կազմակերպության ժողովի գումարման օրվանից առնվազն երեսուն օր առաջ կազմակերպում է Կազմակերպության ժողովի պատվիրակների ընտրությունը,
5.12.5 Մշակում և հաստատում է Կազմակերպության հնգամյա և տարեկան ռազմավարությունը , հիմնական ուղղությունների սահմանումը (պլանը) և հսկում դրա կատարման ընթացքը,
5.12.6 Կազմակերպության խորհրդի իրավասության տակ է կազմակերպության անդամների անդամության նորմատիվների և պահանջների կարգի մշակումը և հաստատումը:
5.12.7 Կազմակերպության անդամների կողմից արտադրվող ապրանքի որակը բնութագրող տեխնիկական պահանջների նորմատիվներն: Արտադրական պրոցեսների նորմատիվային պայմանները: Ստուգման մեխանիզմների, որակի գնահատման միասնական համակարգի մշակումն:
Սույ ենթակետով նախատեսված փորձաքննության կազմակերպման և արտադրական պայմանների գնահատման կարգը, ինչպես նաև Կազմակերպության անդամների կողմից արտադրվող ապրանքների որակին ներկայացվող նվազագույն պահանջները սահմանվում են Խորհրդի կողմից: Խորհրդի կողմից սահմանված կարգը պետք է ապահովի գործընթացի և ընտրանքի օբյեկտիվությունն ու վստահելիությունը: Փորձաքննության և գնահատման գործընթացի ծախսերը կրում է հայտ ներկայացրած անձը՝ Խորհրդի կողմից սահմանված կարգով և չափով:
5.12.8 Կազմակերպության Խորհրդի իրավասության տակ է առանձին ստորաբաժանումների ստեղծումը և լուծարումը:
5.12.9 Խորհրդին կից խորհրդատվական հանձնախմբերի ձևավորումը, այդ թվում՝ դրանց իրավասության ոլորտի և գործունեության կարգի սահմանումը, անդամների ընտրությունը:
5.12.10 Կազմակերպության անդամության մեջ ընդունելու կարգի, անդամության վճարի չափի, վճարման կարգի, անդամության վճարի ուշացման համար տույժի չափի և հաշվարկման կարգի սահմանումը:
5.12.11 Կազմակերպության Նախագահի, Քարտուղարի, աշխատակիցների վարձատրության կարգի և դրույքաչափերի սահմանումն, Կազմակերպության ամենամյա գործունեության ծրագրի, տարեկան եկամուտների ու ծախսերի նախահաշիվների կատարողականների հաստատումը:
5.12.12 Խորհրդի քարտուղարի ընտրությունը, նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը:
5.12.13 Կազմակերպության ծառայություններից օգտվելու կարգի և պայմանների սահմանումը:
5.12.14 Կազմակերպության խորհուրդը Կազմակերպության անդամների նկատմամբ կարող է կիրառել ինչպես խրախուսանքի միջոցներ, այնպես էլ տույժի միջոցներ՝ Կազմակերպության կանոնադրական դրույթների խախտումների դեպքում: Կազմակերպության անդամների նկատմամբ խրախուսանքի և տույժի միջոցներ կիրառելու կարգը սահմանվում է Կազմակերպության խորհրդի կողմից:
5.12.15 Կազմակերպության Խորհրդի անդամներն իրավունք ունեն՝ ներկայացնելու առաջարկություններ նիստերի օրակարգի և քննարկվող հարցերի վերաբերյալ, նախապատրաստելու և խորհրդի քննարկմանը ներկայացնելու հարցեր, առաջարկություններ ու որոշումների նախագծեր, ստանալու տեղեկություններ կազմակերպության գործունեությանը վերաբերող ցանկացած հարցի մասին:
5.12.16 Կազմակերպության խորհրդի որևէ անդամի բացակայության կամ նրա պարտականությունները անհնարին դարձնող այլ հանգամանքների առկայության դեպքում Կազմակերպության խորհրդի աշխատանքն շարունակվում է առանց տվյալ անդամի: Եթե վերոհիշյալ պատճառով Կազմակերպության Խորհրդի անդամներն կազմում են զույգ թիվ, ապա Կազմակերպության Նախագահը ստանում է որոշիչ ձայնի իրավունք:
5.12.17 Կազմակերպության կառավարման մարմիններում ընտրված անձինք կազմակերպության կողմից կարող են վարձատրվել: Նշված անձանց վարձատրության չափը սահմանում է Նախագահը:
5.13 Կազմակերպության Նախագահը
5.13.1 Կազմակերպության Նախագահին հինգ տարի ժամկետով ընտրում է ժողովը, վերընտրվելու իրավունքով:
5.13.2 Կազմակերպության նախագահն ապահովում է ժողովի կամ Խորհրդի որոշումների կատարումը,
5.13.3 միանձնյա տնօրինում և կառավարում է կազմակերպության ցանկացած տեսակի ու չափի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում կազմակերպության անունից:

5.13.4 ներկայացնում է կազմակերպությունը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում,
5.13.5 տալիս է լիազորագրեր,
5.13.6 բանկերում բացում է կազմակերպության հաշվարկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվներ,
5.13.7 իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, կատարման համար տալիս է պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,
5.13.8 հաստատում է կազմակերպության հաստիքացուցակը և տարեկան ծախսերի նախահաշիվը,
5.13.9 հաստատում է կազմակերպության գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերը, այդ թվում՝ նրա առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ներքին կարգապահական և այլ կանոնները,
5.13.10 հինգ տարին մեկ հաստատում է կազմակերպության, ինչպես նաև յուրաքանչյուր տարի՝ նրա մարմինների հաշվետվությունները,
5.13.11 հաստատում է Ժողովների գումարմանը նախորդող տարիների Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները, որոնք հինգ տարին մեկ անգամ ներկայացնում է Ժողովի հաստատմանը,
5.13.12 իրականացնում է օրենքով և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ,
5.13.13 իրականացնում է կազմակերպության ժողովի և կազմակերպության Խորհրդի որոշումներով իրեն վերապահված այլ լիազորություններ,
5.13.14 Նախագահի բացակայության դեպքում նախագահի հրամանով նրա պարտականությունները կատարում է խորհրդի անդամներից ավագ անդամը,
5.13.15 Կազմակերպության գործունեության ընթացքում օրենքով և սույն կանոնադրությամբ բարձրագույն մարմնի բացառիկ իրավասությանը չվերապահված և սույն կանոնադրությամբ չկարգավորված ցանկացած հարց լուծվում է նախագահի կողմից,
5.13.16 Անհրաժեշտության դեպքում նախագահը նշանակում է Կազմակերպության գործադիր տնօրեն՝ կազմակերպության առօրյա աշխատանքները կազմակերպելու համար:
5.14 Գործադիր տնօրենը.
5.14.1 նշանակվում և ազատվում է Կազմակերպության նախագահի կողմից,
5.14.2 հաշվետու է բացառապես Կազմակերպության նախագահին,
5.14.3 գործում է Կազմակերպության նախագահի գրավոր լիազորագրի կամ հանձնարարականի հիման վրա:
5.14.4 Գործադիր տնօրեն նշանակելիս Կազմակերպության նախագահի և գործադիր տնօրենի միջև, օրենքով սահմանված կարգով, կնքվում է աշխատանքային պայմանագիր (սույն դրույթը գործում է, եթե գործադիր տնօրենին նախատեսվում է աշխատավարձի վճարում):
5.15 Կազմակերպության խորհրդի քարտուղարը.
5.15.1 արձանագրում է Կազմակերպության ժողովի և խորհրդի նիստերը,
5.15.2 ստորագրում է Կազմակերպության ժողովի և խորհրդի նիստերի արձանագրությունները,
5.15.3 տնօրինում է Կազմակերպության խորհրդի արխիվը,
5.15.4 կատարում է Կազմակերպության նախագահի կողմից իր վրա դրված առանձին լիազորությունները:

## 6. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ, ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

6.1 Կազմակերպությունը սեփականության իրավունքով կարող է ունենալ շենքեր շինություններ, հողատարածքներ, տրանսպորտային միջոցներ, սարքավորումներ ծրագրային միջոցներ, դրամական միջոցներ (ՀՀ արժույթով և արտարժույթով) արժեթղթեր, բաժնետոմսեր և օրենքով չարգելված այլ գույք:
6.2 Կազմակերպության գույքը, այդ թվում՝ ձեռնարկատիրական գործունեությունից ստացված շահույթը հանդիսանում է Կազմակերպության սեփականությունը: Կազմակերպության անդամը նրա սեփականության նկատմամբ բաժնային իրավունք չունի:
6.3 Կազմակերպության գույքի ձևավորման աղբյուրներ կարող են լինել անդամների ներդրումները, անդամավճարները, ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցները, իր ստեղծած կամ իր մասնակցությամբ այլ Կազմակերպությունից ստացված միջոցները, դրամական մուտքերը: Տեղական և միջազգային կառույցներից, քաղաքացիներից, ֆինանսական կառույցներից նվիրատվությունները, դրամաշնորհները, հանգանակությունները,

դրամական և նյութական ներդրումները, վարկերը, փոխառությունները ինչպես նաև օրենքով թարգելված այլ միջոցները:

## 7. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԳՈՒՅՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

7.1 Կազմակերպության վերակազմակերպումն ու լուծարումը կատարվում է օրենքով սահմանված կարգով:

7.2 Կազմակերպությունը կարող է լուծարվել իր ժողովի կամ դատարանի որոշմամբ:

7.3 Լուծարման մասին որոշում կայացնելու դեպքում կազմավորվում է լուծարման հանձնաժողով և սահմանվում են լուծարման կարգը և ժամկետները:

7.4 Կազմակերպությունը լուծարվելու դեպքում պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքն ուղղվում է Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, դրա անհնարինության դեպքում դրամական միջոցները փոխանցվում են պետական բյուջե, իսկ այլ գույքը սեփականության իրավունքով փոխանցվում է Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս Կառավարության, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

Սույն կանոնադրությունը կազմված է 09 Դեկտեմբեր 2024 թ.-ին և բաղկացած է 9 թերթից:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## REPUBLIC OF ARMENIA ID CARD

Ազգանուն/Surname
ՀՈՎՍԵՓՅԱՆ
HOVSEPYAN

Անուն/Name
ԻՇԽԱՆ
ISHKHAN

Հայրանուն/Patronymic name
ՅՈՒՐԻԻ

Սեռ/Sex
Ա/M

Քաղաքացիություն/Citizenship
ՀՀ/ARM

Ծնվել է/Date of birth
04.06.1972

Նույնականացման քարտի համարը/Identity card number
014402150

Վավերական է մինչև/Date of expiry
13.02.2033

Քաղաքացու ստորագրությունը/Signature of holder

Scanned with CamScanner

Ծննդավայրը/Place of birth

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ARMENIA

Բնակության վայրը/Place of residence

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ARMENIA

Տրվել է/Date of issue

13.02.2023

Ում կողմից/Issuing authority

008

Հանրային ծառայությունների համարանիշը/Social services number

1414720297

Ազգությունը/Nationality

ՀԱՅ

ARMENIAN

Արյան խումբը և ռեզուսը/Blood type and rhesus

I<ARM0144021509<<<<<<<<<<<<<<<

7206041M3302130ARM<<<<<<<<<<<6

HOVSEPYAN<<ISHKHAN<<<<<<<<<<<<<

Scanned with CamScanner

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻՑ ՔԱՂՎԱԾՔ ԱՌ 2024-12-19

# «ՍԵՐՄԵՐ ԵՎ ՏՆԿԱՆՅՈՒԹԵՐ ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ»
## Հասարակական կազմակերպություն (ՀԿ)

| | |
|---|---|
| Գրանցման համար | **211.171.1428262** |
| Հիմնադրման տարի | **2024** |
| Գրանցման ամսաթիվ | **2024-12-19** |
| Գործունեության ժամկետ | **Անժամկետ** |
| Կարգավիճակ | **Իրավաբանական անձի լուծարման գործընթացում գտնվելու կամ գործունեության (գոյության) դադարման մասին պետական միասնական գրանցամատյանում տեղեկություններ գրառված չեն:** |
| Իրավաբանական անձի ծածկագիր (ՁԿԴ) | **55156840** |
| Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ) | **09432167** |
| Սոցիալական վճարների պարտավորությունների անձնական հաշվի քարտի համար (Ապահովադրի ծածկագիր) | **0178262** |
| Էլ. փոստ | **armagrogrup@mail.ru** |
| Կայք | **-** |

**Գտնվելու վայրը**

| | |
|---|---|
| Հասցե | **4-ՐԴ Փ. / Շ / 9/3 ԱՐԾՎԱՆԻԿ 3311 ԿԱՊԱՆ ՍՅՈՒՆԻՔ ՀԱՅԱՍՏԱՆ** |
| Հեռախոս | **+374 43 720127** |

**Գործադիր մարմնի ղեկավար**

| | |
|---|---|
| Անուն Ազգանուն | **ԻՇԽԱՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ ՅՈՒՐԻԻ** |
| Անձնագրային տվյալներ | **AL0403617 2023-08-24 041** |
| Հասցե | **ՍՎԱՃՅԱՆ Փ. / Շ / 22 / 26 ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ 0034 ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ** |

## Տեղեկություններ իրավահաջորդության / իրավանախորդության վերաբերյալ

Իրավանախորդ(ներ) **գրառված չեն**

## Պետական միասնական գրանցամատյանում կատարված փոփոխություններ

**Պետական միասնական գրանցամատյանում փոփոխություններ կատարված չեն**

| Գրանցման ամսաթիվ | Փոփոխություններ |
|---|---|

Քաղվածքը տրամադրող _____ **Աննա Մանուչարյան**
ստորագրություն

Քաղվածքի տրամադրման ամսաթիվ՝ **19-12-2024**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏՅԱՆ ՄԱՐԶԻ ԳՈՐԾԱԿԱՆ ԱՌԱՋՆԱՅ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿՆԻՔ